**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 29-ը ապրիլի 2021թ.
ժամը $14^{30}$

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, մայոր Գ. Սարգսյան,
գնահատողներ՝
- ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչության ավիացիոն տեխնիկական ունեցվածքի ծառայության պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԳԿ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ.Թոմյան
- ՀՀ ԶՈՒ ԱԿ անօդաչու թռչող համակարգերի բաժնի շահագործման և նարաման բաժանմունքի պետ, մայոր Ա. Սարգիսյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության ԳԿ 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Տ. Աբրահամյան

***« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Տ.Աբրահամյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ:

6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Տ.Աբրահամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | ՖԱԵՌԻՔՍ ՍՊԸ |
| 2 | Էդգար Նալբանդյան Ա/Ձ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտ[illegible] պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Տ.Աբրահամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են « ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ՖԱԵՌԻՔՍ ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը /բոլոր հավելվածները/ էլեկտրոնային ստորագրվել են ընկերության տնօրենը չհանդիսացող անձի կողմից, սակայն հայտում բացակայում է ընկերության տնօրենի կողմից այդ անձին տրված լիազորագիրը՝ հայտով ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության ունենալու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 29.04.2021թ ծանուցել էր «ՖԱԵՌԻՔՍ» ՍՊԸ-ին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ՖԱԷՐԻՔՍ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը 03.05.2021թ. մերժել է «ՖԱԷՐԻՔՍ» ՍՊԸ հայտը:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

[illegible]

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.Տես հավելված 1:

**Հավելված 1**

| ՀՀ | Առարկայի անվանումը | Չ/Մ | Քանակ | Ընդհանուր գումար | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության | | | Մրցույթի մասնակցող կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գին առանց ԱԱՀ | գին ԱԱՀ-ով | անվանումը | գին առանց ԱԱՀ | գին ԱԱՀ-ով |
| 1 | Ստորաբաժանումների վերանորոգման ծառայություններ այդ թվում՝ Մասցոր և պլասմա կոմբինացված -ՊՄ 130 մեքենայի խորանարդների վերանորոգում՝ ապակեպատումների վերանորոգում՝ նոր մասերի տրամադրում | դրամ | 1 | 2880000 | Էդգար Նալբանդյան Ա/Ձ | 2880000 | | Էդգար Նալբանդյան Ա/Ձ | 2880000 | |
| 2 | Դահլիճի սարքերի տեխնիկական ծառայություններ, այդ թվում՝ (բարձր ճնշման սարքերի տեխնիկական սպասարկում և հավաստագրում) | դրամ | 1 | 462000 | ՉԿԱՅԱՑԱԾ | | | ՖԱԷՐԻՔՍ ՍՊԸ | 420000 | |
| 4 | Հակահրդեհային սարքերի վերանորոգման և սպասարկման ծառայություններ, այդ թվում՝ Էլեկտրական և սարքավորումների հակահրդեհային համակարգի բալոնների տեխնիկական սպասարկում և հավաստագրում | դրամ | 1 | 200000 | ՉԿԱՅԱՑԱԾ | | | ՖԱԷՐԻՔՍ ՍՊԸ | 200000 | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/ հրավերի պայմաններին:

3.3 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 8.6 կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 06.05.2021թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:Մասնակիցը բանակցությունների չի ներկայացել, ուստի վերջինիս առաջարկած գինը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ « ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Տ. Աբրահամյան)

4.1 06.05.2021թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել Էդգար Նալբանդյան Ա/Ձ –ին, իսկ ընթացակարգը 2-3-րդ չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց « ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ:**

(Տ. Աբրահամյան)

5.1 « ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Տ. Աբրահամյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ — Գ. Սարգսյան

Գնահատող — Ա. Համբարյան

Գնահատող — Լ. Թումյան

Գնահատող — Ա. Սարգիսյան

Գնումները համակարգող՝ — Տ.Աբրահամյան